Coca-Cola HBC Armenia

Տնտեսական և սոցիալական ազդեցության գնահատում 2022 - 2023 թթ.

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ

Նոյեմբեր 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3	**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**
4	**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ**
5	**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ**
6	**ՓԱՍՏԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ. «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**
9	**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**
10	Մայրցամաքների միավորում. «Կոկա-Կոլա ՀԲՔ Խումբ»-ն ըմպելիքների արտադրության համաշխարհային ցանցում
10	Առաջնորդող սկզբունքներ. Հաջողությունը ձևավորող արժեքներ
11	Առաջնորդության հիմքը. Ղեկավար կազմ
11	Ամբողջականության սկզբունքի կարևորումը. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի գործարար վարքագծի կոդեքսի էությունը
11	Ամբողջականության սկզբունքի պահպանում. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արենիա»-ի հաստատուն դիրքորոշումը կաշառակերության դեմ պայքարում
11	Առաջատար դիրքը շուկայում. Հայաստանում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մասնաբաժինն ըմպելիքների արտադրության ոլորտում
12	Համերի բազմազանություն. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արենիա»-ի ըմպելիքների բազմազան ապրանքատեսականին
12	Համախմբում հանուն ազդեցության. Անդամակցություն ասոցիացիաներին
12	Որակը և սննդի անվտանգությունը որպես հիմնարար արժեք. Ստանդարտների բարձրացում մատակարարման շղթայի կատարելագործման միջոցով
14	**ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ**
17	Ներուժի բացահայտում. Սովորելու և մասնագիտորեն զարգանալու դերը կարիերայի ձևավորման գործում
18	Բարեկեցությունը որպես առաջնահերթություն. Աշխատանքի անվտանգության և աշխատակիցների առողջության պահպանման կարևորությունը
19	**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**
20	Շրջակա միջավայրի կայունություն
21	Համայնքների բարեկեցություն
22	Երիտասարդների զարգացում
23	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ**
24	Ազդեցությունը ՀԱԱ-ի մասով
27	Աշխատատեղերի ապահովում
29	Ֆիսկալ ազդեցություն
30	Ներդրումներ
31	**ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
33	**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**
34	**ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Capex	Կապիտալ ծախսումներ
FSSC 22000	Մննդամթերքի անվտանգության համակարգի հավաստագրում 22000
GFSI	Մննդամթերքի անվտանգության համաշխարհային նախաձեռնություն
ISO 14001	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն 14001 (շրջակա միջավայրի կառավարման համակարգ)
ISO 45001	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն 45001 (աշխատանքի պաշտպանության և անվտանգության կառավարման համակարգ)
ISO 9001	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն 9001 (որակի կառավարման համակարգ)
OH&S	Աշխատանքի անվտանգություն և աշխատակիցների առողջության պահպանում
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
գ	գրամ
կգ	կիլոգրամ
ԿԶՆԼ	Կայուն զարգացման նորարարական լուծումներ
Կոկա-Կոլա ՀԲՔ	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի»
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՍ	Հոսանքի կառավարման սարք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ դրամ	Հայկական դրամ

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱԱ	ՀԱԱ-ն չափում է առանձին արտադրողի, արդյունաբերության ոլորտի, տնտեսության ճյուղի կամ գործունեության ներդրումը տնտեսությունում՝ առանց միջանկյալ սպառման (օրինակ՝ արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների և ծառայությունների): Այն չափում է արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների տնտեսական արժեքը:
ՀՆԱ	ՀՆԱ-ն որոշակի ժամանակաշրջանի ընթացքում երկրի սահմաններում արտադրված ամբողջ պատրաստի արտադրանքի և ծառայությունների դրամական արժեքն է:
Ուղղակի ազդեցություն	Առաջին մակարդակի ազդեցություն, որն առաջանում է ընկերության/արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի գործունեության և ստեղծած արժեքի արդյունքում:
Անուղղակի ազդեցություն	Երկրորդ մակարդակի ազդեցություն, որն առաջանում է ընկերության/արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի մատակարարման շղթայի միջոցով իրականացված գործունեության և ստեղծած արժեքի արդյունքում:
Ածանցյալ ազդեցություն	Մուլտիպլիկատորի ազդեցություն, որն առաջանում է ընկերության/արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի ուղղակի աշխատակիցների և մատակարարման շղթայի աշխատակիցների կողմից ընկերության/արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը ծախսելու արդյունքում:
I-ին կարգի մուլտիպլիկատոր	I-ին կարգի մուլտիպլիկատորը ներառում է ուղղակի և անուղղակի ազդեցությունները:
II-րդ կարգի մուլտիպլիկատոր	II -րդ կարգի մուլտիպլիկատորը ներառում է ուղղակի, անուղղակի և ածանցյալ ազդեցությունները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Արթուր Սահակյան
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»

Հարգելի ընթերցող,

Վերջին երկու տարիները (2022-2023թթ.) «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի համար հատկանշական են եղել տոկունությամբ, նորարարություններով և կայուն զարգացում ապահովելու հանձնառությամբ: Ինչպես տեղին նշեց «Կոկա-Կոլա ՀԲՔ Խմբի»-ի Գլխավոր տնօրեն՝ Զորան Բոգդանովիչը.

«Մենք լուրջ մարտահրավերների բախվեցինք, բայց սրտով և գիտակցությամբ միավորվեցինք որպես Մեկ թիմ և դարձանք ավելի ուժեղ»:

Օգտվելով առիթից՝ կցանկանայի մի պահ կանգ առնել, խորհել և նշել այն հաջողությունները, որոնց մենք հասել ենք որպես բիզնես: Անընդհատ փոփոխվող միջավայրում հարմարվելու և առաջադիմելու մեր կարողությունը վճռորոշ է եղել այսօրվա գործարար միջավայրի բարդություններին դիմակայելու համար:

Մենք զգալի առաջընթաց ենք գրանցել մեր «Աճի Ուղուն» համապատասխան, ինչպես նաև սպառողների աճող կարիքները բավարարելու մեր առաքելությանը համահունչ: Մասնավորապես, ընդլայնել ենք մեր 24/7 ապրանքատեսականին՝ կատարելով ռազմավարական համալրում՝ ներկայացնելով պրեմիում դասի ալկոհոլային խմիչք, որը լրացնում է գազավորված զովացուցիչ ըմպելիքների և չգազավորված ըմպելիքների մեր ներկայիս տեսականին:

Տեխնոլոգիաների, նորարարության և ռազմավարական գործընկերության ոլորտներում ընկերության ստանձնած հանձնառության արդյունքը դարձան զգալի ներդրումները, որոնք ընդլայնեցին մեր անհատական կարողությունները: Թվային փոխակերպման և համակարգային ինտեգրման վրա ինտենսիվ կենտրոնացվածության շնորհիվ այդ նախաձեռնությունները մեզ հնարավորություն կտան մնալ մրցունակ և ճկուն՝ առաջընթացին զուգահեռ:

2023թ-ի կայուն զարգացման մեր ցուցանիշները մեծ ճանաչում ստացան. մենք բարձր միավորներ ստացանք բնապահպանական, սոցիալական և կառավարման չափանիշների տեսանկյունից և «Կոկա-Կոլա ՀԲՔ Խումբը» ճանաչվեց որպես աշխարհի՝ ըմպելիքներ արտադրող ամենակայուն ընկերությունը՝ ըստ 2023թ. Դոու Ջոնսի կայուն զարգացման ինդեքսի: Բացի այդ, ընկերությունը ներառվեց CDP-ի «Ա ցուցակում՝ կլիմայի և ջրային ռեսուրսների անվտանգության ոլորտում իր կողմից կիրառվող օրինակելի պրակտիկայի շնորհիվ:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության օրակարգը, որն առաջնահերթություն է տալիս թափոնների կառավարման կայուն մեթոդներին և երիտասարդների զարգացման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված նախաձեռնություններին, հնարավորություն է ընձեռել հազարավոր երիտասարդների զարգացնել իրենց ապագայի համար անհրաժեշտ հմտությունները: Այս հանձնառության շնորհիվ մենք էլ ավելի ենք կենտրոնանում շրջակա միջավայրի պահպանության, հասարակության զարգացման և համայնքների բարեկեցության հարցերի վրա:

Նայելով առաջ՝ մենք կշարունակենք գործել մեր նպատակներին և մշակույթին համահունչ, որոնք մեր հաջողության գրավականն են: Մենք հավատարիմ կմնանք մեր ռազմավարական առաջնահերթություններին՝ միշտ հանդես գալով որպես մեկ թիմ և հոգ տանելով միմյանց և հասարակության մասին, որտեղ գործունեություն ենք ծավալում:

Միասին մենք ձգտում ենք մեր աշխատակիցների, գործընկերների, հաճախորդների և սպառողների համար ստեղծել ավելի բարեկեցիկ և կայուն ապագա՝ առաջնորդվելով մեր հիմնական արժեքներով և գերազանցության հասնելու մեր նպատակով:

Շնորհակալություն դեպի կայունություն մեր ճանապարհորդության անբաժանելի մասը լինելու համար:

01

ՓԱՍՏԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2022-2023թթ. ընթացքում ստացված հասույթ[1]

2022թ.	2023թ.	Ընդամենը 2022-2023թթ.
32.7 միլիարդ ՀՀ դրամ	**35.0 միլիարդ ՀՀ դրամ**	**67.7 միլիարդ ՀՀ դրամ**

Ընդամենը ազդեցությունը ՀԱԱ-ի մասով[1,3]

2022թ.	2023թ.	Ընդամենը 2022-2023թթ.
22.5 միլիարդ ՀՀ դրամ	**26.6 միլիարդ ՀՀ դրամ**	**49.1 միլիարդ ՀՀ դրամ**

Ընդամենը ՀԱԱ-ի մասով ազդեցության կառուցվածքը 2022-2023թթ. համար[1,3]



22.68 միլիարդ ՀՀ դրամ
Ուղղակի ազդեցություն ՀԱԱ-ի մասով

21.70 միլիարդ ՀՀ դրամ
Անուղղակի ազդեցություն ՀԱԱ-ի մասով

4.73 միլիարդ ՀՀ դրամ
Ածանցյալ ազդեցություն ՀԱԱ-ի մասով

Ընդամենը ֆիսկալ ազդեցություն[1,3]

2022թ.	2023թ.	Ընդամենը 2022-2023թթ.
11.2 միլիարդ ՀՀ դրամ	**12.6 միլիարդ ՀՀ դրամ**	**23.8 միլիարդ ՀՀ դրամ**

[1] «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից տրամադրված տեղեկատվություն

[3] «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի հաշվարկներ

Ընդամենը պետական բյուջե կատարված Վճարումների կառուցվածքը 2022-2023թթ. համար[1,3]



15.35 միլիարդ ՀՀ դրամ
Ուղղակի ֆիսկալ ազդեցություն

4.35 միլիարդ ՀՀ դրամ
Անուղղակի և ածանցյալ ֆիսկալ ազդեցություն

4.13 միլիարդ ՀՀ դրամ
Ֆիսկալ ազդեցություն՝ ձևավորված աշխատակիցների շնորհիվ

Ընդամենը ազդեցությունը աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից[1,3]





- Ուղղակի
- Անուղղակի
- Ածանցյալ

Ներդրումները 2022-2023թթ-ին[1]

2022թ.
827 միլիոն ՀՀ դրամ

2023թ.
1,086 միլիոն ՀՀ դրամ

Ընդամենը 2022-2023թթ.
1,913 միլիոն ՀՀ դրամ

Տեղական մատակարարների գծով ծախսումների մասնաբաժինը (ըստ արժեքի) ընդհանուր մատակարարների գծով ծախսումներում[1]

39%
2022թ.

43%
2023թ.

Սոցիալական ազդեցություն[1]

2022թ.
23.7 միլիոն ՀՀ դրամ

2023թ.
18.6 միլիոն ՀՀ դրամ

02

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մայրցամաքների միավորում. «Կոկա-Կոլա ՀԲՔ Խումբ»-ն ըմպելիքների արտադրության համաշխարհային ցանցում

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա», «Ընկերություն» կամ «մեր Ընկերությունը») իր գործունեությունն իրականացնում է որպես Կոկա-Կոլա ՀԲՔ Ուկրաինա, Հայաստան և Մոլդովա բիզնես միավորի մաս, որը «Կոկա- Կոլա ՀԲՔ Խմբի» անդամ է: «Կոկա-Կոլա ՀԲՔ Խումբը» Կոկա-Կոլա ընկերության պաշտոնական շշալցնող գործընկերն է: Կոկա-Կոլա ընկերությունն արտադրում և մատակարարում է խտանյութեր, հումքեր և օշարակներ, սեփականության իրավունքով տիրապետում է ապրանքանիշերի և պատասխանատու է սպառողների ապրանքանիշային շուկայավարման նախաձեռնությունների համար: «Կոկա-Կոլա ՀԲՔ»-ն օգտագործում է խտանյութերը և օշարակները վերջնական ապրանքանիշավորված ըմպելիքներ արտադրելու, փաթեթավորելու, շուկայում դրանց առաջխաղացումը խթանելու և առևտրային գործընկերներին և սպառողներին մատակարարելու համար: Իր գործունեությունն իրականացնելով երեք մայրցամաքների 29 երկրներում՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Խումբ»-ն իր արտադրանքը հասանելի է դարձրել 740 միլիոն պոտենցիալ սպառողների համար և ունի 136 ապրանքանիշերից բաղկացած բազմատեսակ ապրանքատեսականի:

Շուրջ 28 տարի «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն Հայաստանում արտադրում է գազավորված և չգազավորված ըմպելիքների լայն տեսականի և ջուր: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի շնորհիվ հայաստանյան շուկա է մուտք գործել 11 ապրանքանիշ, Ընկերությունը սպասարկում է ավելի քան 3 միլիոն սպառողի և գործակցում մոտ 13,500 հաճախորդների հետ: 2022թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի հասույթը կազմել է 32.7 միլիարդ ՀՀ դրամ, իսկ 2023թ-ին գրանցվել է հասույթի 7% աճ՝ կազմելով 35.0 միլիարդ ՀՀ դրամ[1]:

2022թ-ին ոչ ալկոհոլային ըմպելիքների վաճառքից ստացված հասույթը Հայաստանում կազմել է 52.7[2] միլիարդ ՀՀ դրամ՝ 2023թ-ին աճելով մինչև 60.3[2] միլիարդ ՀՀ դրամ: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մասնաբաժինը ոչ ալկոհոլային ըմպելիքների ոլորտում 2022թ-ին կազմել է 62%, իսկ 2023թ-ին՝ 58%:

Առաջնորդող սկզբունքներ. Հաջողությունը ձևավորող արժեքներ

Մեր արժեքները մեր յուրօրինակության հիմքն են, որոնք մեզ առաջ են մղում և ոգեշնչում՝ օգնելով հասնել մեր նպատակներին:

Հաճախորդն առաջնային է

Մենք միշտ հաճախորդամետ ենք: Մենք գիտակցում ենք լսելու և հասկանալու կարևորությունը, և մեր նպատակն է մշտապես գերազանցել մեր հաճախորդների ակնկալիքները:

Մենք, ոչ թե ես

Մենք գնահատում ենք խելացի մարդկանց, սակայն հավատում ենք, որ թիմային աշխատանքի միջոցով կարելի է հասնել նրան, ինչի մասին անհատը կարող է միայն երազել:

Դարձնել ամեն ինչ ավելի պարզ

Մենք խրախուսում ենք հետաքրքրասիրությունը և ճկունությունը և վստահ ենք, որ դժվարությունները կարելի է նվազագույնի հասցնել՝ ունենալով քաջություն և դրսևորելով կարգապահություն ամենակարևորի վրա կենտրոնանալու համար:

Կայունության ապահովում

Մենք ունենք երկարաժամկետ հեռանկարներ և վստահ ենք, որ կարող ենք ապահովել կայուն արդյունքներ, ստեղծել արժեքներ մեր աշխատակիցների, շրջակա միջավայրի, գործընկերների և այն համայնքների համար, որտեղ գործունեություն ենք ծավալում:

[2]Տեղեկատվական բաց աղբյուրներ

Առաջնորդության հիմքը. Ղեկավար կազմ

Վերադաս ղեկավար կազմը բաղկացած է վեց անդամից.

- Գլխավոր Տնօրեն
- Հասարակական գործերի և կայունության բաժնի տնօրեն
- Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի տնօրեն
- Իրավաբանական և սեփականության պաշտպանության բաժնի տնօրեն
- Մատակարարման շղթայի բաժնի տնօրեն
- Ֆինանսական բաժնի տնօրեն

Ամբողջականության սկզբունքի կարևորումը. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի գործարար վարքագծի կոդեքսի էությունը

Գործարար վարքագծի կոդեքսը կարևոր քաղաքականություն է, որը պարտավորեցնում է բոլոր աշխատակիցներին հետևել գործարար վարքագծի բարձր չափանիշներին: Ընկերության համար այն ծառայում է որպես համապատասխանության ապահովման հիմք՝ հնարավորություն տալով ղեկավարներին զարգացնել էթիկական վարքագծի մշակույթը և արդյունավետ կերպով արձագանքել խնդիրներին:

Ընկերությունում խրախուսվում է աշխատակիցների կողմից ուղղորդում ստանալու համար դիմելը, որոշումների համար անհրաժեշտ հաստատումներ ստանալը, արտահայտվելը, ինչը նվազեցնում է ղեկավարման սկզբունքների խախտման ռիսկը: Ընկերությունն ակտիվ գործակցում է համայնքների հետ՝ ընդգծելով իր հանձնառությունն Ամբողջականության սկզբունքին: Կոդեքսի իմացությունը թույլ է տալիս ձևավորել արդար, արդյունավետ աշխատավայր և ունենալ հմուտ ու հարգալից աշխատակիցներ:

Ամբողջականության սկզբունքի պահպանում. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի հաստատուն դիրքորոշումը կաշառակերության դեմ պայքարում

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն անդրդվելի է կաշառակերության նկատմամբ զրո հանդուրժողականության իր հանձնառությունում՝ ցուցաբերելով արդարություն, թափանցիկություն և ազնվություն մատակարարների, հաճախորդների և կառավարության հետ իր բոլոր հարաբերություններում: Ընկերությունն ընդունում է բիզնեսում կաշառակերության ռիսկերի առկայության հանգամանքը և կիրառում է ազնվության, հարգանքի և թափանցիկության սկզբունքները պահպանելու խիստ կանոններ այդ ռիսկերը նվազեցնելու նպատակով: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կաշառակերության դեմ պայքարի քաղաքականությունն Ընկերության էթիկայի հայեցակարգի հիմնաքարն է, որը պահանջում է քաղաքականության պահանջների կատարում բոլոր օղակների աշխատակիցների կողմից և խախտումների դիտարկում առավելագույն լրջությամբ: Քաղաքականությունն աշխատակիցներին տրամադրում է ոչ միայն գիտելիքներ և գործիքներ կաշառակերության դեմ պայքարելու համար, այլ նաև ուղղորդում է, թե որտեղ փնտրել լրացուցիչ տեղեկատվություն՝ ընդգծելով Ընկերության հավատարմությունն էթիկական վարքագծին գործարար աշխարհում:

Առաջատար դիրքը շուկայում. Հայաստանում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մասնաբաժինն ըմպելիքների արտադրության ոլորտում [1]



Գազավորված ոչ ալկոհոլային ըմպելիքներ | Հյութեր | Թեյ | Էներգետիկ ըմպելիք | Ջուր

- «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»
- Շուկայի այլ մասնակիցներ

Համերի բազմազանություն. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ըմպելիքների բազմազան ապրանքատեսականին

2022-2023թթ. ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն արտադրել, ներմուծել և իրացրել է ըստ հետևյալ կատեգորիաների արտադրանքները.

Ոչ ալկոհոլային ըմպելիքներ

Coca-Cola, Fanta, Sprite, Schweppes, Coca-Cola Zero Sugar

Հյութեր

Dobry, Pulpy

Ջուր

BonAqua

Թեյ

Fuzetea

Էներգետիկ ըմպելիք

Burn

Այլ

Nemiroff

Համախմբում հանուն ազդեցության. Անդամակցություն ասոցիացիաներին

Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում – Տնօրենների խորհուրդ, Նախագահ

Եվրոպական բիզնես ասոցիացիա – Տնօրենների խորհուրդ, Խորհրդի անդամ

Հայ-բրիտանական գործարարության պալատ – Տնօրենների խորհուրդ, 1-ին փոխնախագահ

«Մանթաշյանց» գործարարների միություն – Տնօրենների խորհուրդ, Խորհրդի անդամ

Որակը և սննդի անվտանգությունը որպես հիմնարար արժեք. Ստանդարտների բարձրացում մատակարարման շղթայի կատարելագործման միջոցով

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ներդրել է մշակույթ, որն առաջնահերթություն է տալիս որակին և սննդի անվտանգությանը՝ որպես Ընկերության հիմնարար արժեքին՝ շեշտադրելով ստանդարտներին չհամապատասխանելու զրո հանդուրժողականության քաղաքականությունը: Ընկերությունը շարունակաբար գնահատում է որակի և սննդամթերքի անվտանգության մշակույթի ներկա վիճակը՝ բացահայտելով բարելավման ոլորտները և հետևելով առաջընթացին՝ այն ավելի բարձր մակարդակի հասցնելու նպատակով: Որակի ապահովման այդ հանձնառությունը վերաբերում է նաև մատակարարներին: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն պահանջում է, որպեսզի հումք և առաջնային փաթեթավորման նյութեր ապահովող մատակարարները սերտիֆիկացված լինեն ISO 9001 (կառավարման համակարգի որակ), FSSC 22000 (սննդի անվտանգություն), ISO 14001 (շրջակա միջավայրի պահպանություն) և ISO 45001 (աշխատանքի անվտանգություն և աշխատակիցների առողջության պահպանում) միջազգային ստանդարտների պահանջների համաձայն:

Արտադրանքի որակի հետ կապված խնդիրները նվազագույնի հասցնելու նպատակով՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ներդրել է բարձր պահանջներ ներկայացնող գործընթացներ: Ընկերությունն ունի համապատասխան համակարգեր և գործընթացներ, որոնք թույլ են տալիս արագ և արդյունավետ լուծել խնդիրները, եթե այդպիսիք առաջանան՝ պահպանելով հաճախորդների և սպառողների վստահությունն իր արտադրանքի նկատմամբ:

2022-2023թթ. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ավելացրել է տեղական մատակարարների գծով ընդհանուր ծախսումների մասնաբաժինը (ըստ արժեքի) ընդհանուր մատակարարների գծով ծախսումներում, ինչը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության՝ ընդհանուր ՀԱԱ-ի վրա մուլտիպլիկատորի ազդեցության միջոցով:

Տեղական գնումների մասնաբաժինը[1,3]



Տեղական մատակարարներից գնումների հիմնական դասերը, 2022թ. և 2023թ.[1,3]



- Մննդամթերք և ըմպելիքներ
- Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
- Փոխադրման ծառայություններ
- Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք
- Այլ

Սպասարկվող շուկաներն ըստ հասույթի, 2022-2023թթ.[1,3]



03

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Մենք ձգտում ենք լինել լավագույն ընտրությունը լավագույն տաղանդների համար՝ առաջարկելով աշխատավայր, որտեղ աշխատակիցները կզգան, որ իրենց հասկանում են, գնահատում և ոգեշնչում հասնելու առավելագույն ներուժին: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի նպատակն է զարգացնել իր մարդկային ռեսուրսները՝ ընձեռելով հնարավորություններ տարբեր գործառույթների, մակարդակների, աշխարհագրական շրջանների, տարբեր կրթություն և մասնագիտական որակավորում ունեցող աշխատակիցներին:

2022թ.

328 աշխատակից[1,4]

Կանայք կազմում են ընդհանուր աշխատակիցների 22%-ը[1]:

Երևանում աշխատում է ընդհանուր աշխատակիցների 62%-ը[1], իսկ մնացած 38%-ը[1] աշխատում է մարզերում:

2023թ.

344 աշխատակից[1,4]

Կանայք կազմում են ընդհանուր աշխատակիցների 23%-ը[1]:

Երևանում աշխատում է ընդհանուր աշխատակիցների 60%-ը[1], իսկ մնացած 40%-ը[1] աշխատում է մարզերում:

5%[1] աշխատակիցների թվի աճ

Աշխատակիցներն ըստ տարիքի, 2022թ. և 2023թ.[1]



Աշխատակիցներն ըստ սեռի և դասի, 2022թ.[1] և 2023թ.[1]



Տղամարդ
Կին
Փոփոխության առաջնորդներ
Առաջին օղակի ղեկավարներ
Մասնագետներ
Օժանդակ աշխատակիցներ
Վաճառքի մասնագետներ

[4]Աշխատակիցների թիվը ներկայացված է անձանց քանակով՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ



Աշխատակիցների թվաքանակի փոփոխություններ[1], 2022թ.

Դաս		Նոր աշխատակիցների թիվը	Տոկոսային հարաբերակ-ցություն	Աշխատակիցների հոսունությունը	Տոկոսային հարաբերակ-ցություն
Ըստ տարիքի	20-29	54	62.8%	38	43.2%
	30-39	6	7.0%	40	45.5%
	40 +	26	30.2%	10	11.4%
Ըստ սեռի	Կին	16	18.6%	14	15.9%
	Տղամարդ	70	81.4%	74	84.1%
Ըստ շրջանների	Երևան	42	48.8%	49	55.7%
	Մարզեր	44	51.2%	39	44.3%
Ըստ աշխատակցի դասի	Առաջին օղակի ղեկավարներ	3	3.5%	14	15.9%
	Մասնագետներ	23	26.7%	21	23.9%
	Օժանդակ աշխատակիցներ	35	40.7%	35	39.8%
	Վաճառքի մասնագետներ	25	29.1%	18	20.5%
Ընդամենը		**86**	**26.2%**	**88**	**26.8%**

Աշխատակիցների թվաքանակի փոփոխություններ[1], 2023թ.

Դաս		Նոր աշխատակիցների թիվը	Տոկոսային հարաբերակ-ցություն	Աշխատակիցների հոսունությունը	Տոկոսային հարաբերակ-ցություն
Ըստ տարիքի	20-29	44	54.3%	29	45.3%
	30-39	29	35.8%	28	43.8%
	40 +	8	9.9%	7	10.9%
Ըստ սեռի	Կին	21	25.9%	15	23.4%
	Տղամարդ	60	74.1%	49	76.6%
Ըստ շրջանների	Երևան	45	55.6%	37	57.8%
	Մարզեր	36	44.4%	36	42.2%
Ըստ աշխատակցի դասի	Փոփոխության առաջնորդներ	2	2.5%	0	0.0%
	Առաջին օղակի ղեկավարներ	1	1.2%	5	7.8%
	Չնշանակված	1	1.2%	1	1.6%
	Մասնագետներ	21	25.9%	16	25.0%
	Օժանդակ աշխատակիցներ	39	48.1%	22	34.4%
	Վաճառքի մասնագետներ	17	21.0%	20	31.3%
Ընդամենը		**81**	**23.5%**	**64**	**18.6%**

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն կատարելագործում է իր աշխատավայրի մշակույթը՝ աշխատակիցներին առաջարկելով մի շարք ոչ ֆինանսական հատուցումներ՝

- Առողջության ապահովագրություն
- Մննդի քարտեր
- Կորպորատիվ ավտոբուս
- Կորպորատիվ տաքսի
- Նվերներ (ներառյալ նվեր քարտեր) տարբեր առիթներով (Ամանոր, Զատիկ, Մարտի 8, Բանակի օր և այլն)
- Թիմ բիլդինգներ
- Անսահմանափակ սուրճ և թեյ
- Կորպորատիվ զեղչեր տարբեր ընկերություններից
- Համերգների և այլ միջոցառումների տոմսեր
- Ուսուցման հնարավորություններ

Մեր Ընկերությունը ձգտում է առաջարկել աշխատավաձերի մրցունակ փաթեթներ իր կրտսեր աշխատակիցներին՝ զգալիորեն գերազանցելով օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը: Այդ մոտեցումը ոչ միայն ցուցադրում է Ընկերության մոտեցումն արդար վարձատրությանը, այլ նաև արտացոլում է Ընկերության ներդրումը բարձրակարգ մասնագետների ներգրավման և պահպանման գործում՝ ապահովելով աշխատանքի դիմաց համապատասխան վարձատրություն աշխատակցի կարիերայի հենց սկզբից:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կրտսեր աշխատակցի աշխատավարձի և օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը (ըստ սեռի)[1]



Ներուժի բացահայտում. Սովորելու և մասնագիտորեն զարգանալու դերը կարիերայի ձևավորման գործում

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն, լինելով տեղական շուկայի լավագույն գործատուներից, ընդգծում է իր հանձնառությունը ստեղծելու ոլորտի լավագույն մասնագետների թիմեր՝ կատարելով զգալի ներդրումներ իր աշխատակիցների մասնագիտական զարգացման համար: Ընկերությունն ապահովում է դինամիկ և մարտահրավերներով լի աշխատանքային միջավայր, որն ընձեռում է աճի բազմաթիվ հնարավորություններ՝ խրախուսելով աշխատակիցներին կատարելագործվել և սկսել եզակի ու հետաքրքիր կարիերայի ուղի:

Կենտրոնանալով անհատականացված զարգացման ծրագրերի վրա, որոնք հասանելի են բոլորին, «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն իր աշխատակիցներին հնարավորություն է տալիս վերահսկել իրենց կարիերայի առաջընթացը: Ղեկավարներն առանցքային դեր ունեն՝ հանդես գալով որպես քոուչ յուրաքանչյուր աշխատակցի առաջխաղացմանն աջակցելու համար:

Տեղեկատվություն դասընթացների վերաբերյալ

2022-2023թթ. ընթացքում մեր Ընկերությունն անց է կացրել տարբեր թեմաներով դասընթացներ, այդ թվում՝

- Աշխատանքի անվտանգություն և աշխատակիցների առողջության պահպանում
- Տեղեկացվածություն բնապահպանության խնդիրներին
- Փաթեթավորման, թափոնների կառավարման և վերամշակման պրակտիկա
- Որակի ապահովում
- Կլիմայի փոփոխության հարմարվողականություն
- Ավտոպարկի անվտանգության կանոններ
- Սպառողների առողջություն և բարեկեցություն

Բացի այդ, մեր Ընկերությունն առաջարկել է դասընթաց Ընկերության քաղաքականության և ուղեցույցների վերաբերյալ՝ երաշխավորելու համար մեր ստանդարտների իմացությունը և դրանց հետ համապատասխանությունը բոլոր աշխատակիցների կողմից:

2023թ-ին մեր Ընկերությունն իրականացրեց մի շարք ծրագրեր և նախաձեռնություններ աշխատանքի պաշտպանության և անվտանգության վերաբերյալ:

Մենք իրականացրեցինք երկշաբաթյա ծրագիր՝ ուղղված աշխատանքի պաշտպանությանը և անվտանգությանը, նախաձեռնեցինք Աշխատակիցների և Ընկերության աշխատանքի արդյունավետության բարձրացման ծրագիր, նշեցինք Սենդամթերքի անվտանգության համաշխարհային օրը և Աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրվա կապակցությամբ անցկացրեցինք արտակարգ իրավիճակներում գործողությունների վարժանքներ՝ ադապտացված պատերազմական գործողությունների սցենարներին: Այդ նախաձեռնություններում ընդգրկվեց մեր աշխատակիցների 100%-ը:

Բարեկեցությունը որպես առաջնահերթություն. Աշխատանքի անվտանգության և աշխատակիցների առողջության պահպանման կարևորությունը

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ձգտում է զարգացնել աշխատանքի պաշտպանության և անվտանգության մշակույթը՝ իր գործունեությանը հատուկ ռիսկերին և հնարավորություններին համապատասխանող արդյունավետ ստանդարտներ և պրակտիկա ներդնելու միջոցով: Ընկերության առաքելությունն է ապահովել անվտանգ աշխատավայր բոլոր աշխատակիցների, կապալառուների, այցելուների և Ընկերության հսկողության ներքո գտնվող անձանց համար՝ նպատակ ունենալով ապահովել «զրո պատահար» բոլոր գործընթացներում և տեղամասերում: Մեր աշխատանքի պաշտպանության և անվտանգության քաղաքականությունը հաստատվում է Գլխավոր տնօրենի կողմից և ներկայացվում է Ընկերության բոլոր աշխատակիցներին:

Մեր Ընկերությունը հավաստագրված է ISO 45001 ստանդարտով և յուրաքանչյուր տարի իրականացնում է ստուգումներ, որոնք հաստատում են համակարգի համապատասխանությունը ստանդարտներին և շարունակական կատարելագործումը:

2.44[1]
պատահար վարած միլիոն կիլոմետրի կտրվածքով, 2023թ.

2.48[1]
պատահար վարած միլիոն կիլոմետրի կտրվածքով, թիրախային ցուցանիշ

ՉԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ
Աշխատակիցների և կապալառուների լուրջ վնասվածքներ

Բացի այդ, Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում աշխատակիցների որակավորման բարձրացմանն աշխատանքի անվտանգության, աշխատակիցների առողջության պահպանման ոլորտում՝ առաջարկելով համապատասխան դասընթացներ՝ մշակված յուրաքանչյուր հաստիքի համար:

04

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունը հիմնված է երեք առանցքային սկզբունքների վրա:

Շրջակա միջավայրի կայունություն

Թափոնների կայուն կառավարումը «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններից մեկն է:

Թափոնների կայուն կառավարման խթանում

2022-2023թթ-ից սկսած մեր Ընկերությունն իրականացնում է թափոնների կայուն կառավարմանը և շրջանաձև տնտեսության ձևավորմանն ուղղված նախագծեր՝ դրանցում ներգրավելով նաև իր գործընկերներին: Մեր համագործակցությունը սկսվել է «Երևան Մոլ» առևտրի և զվարճանքի համալիրի հետ, այնուհետև շարունակվել «Թումանյան Շաուրմա» արագ սննդի ոլորտի ցանցի, «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ի, «Արտ Լանչ» ընկերության, «Ֆուդիտորի»-ի և «Երևան Պարկ»-ի հետ:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի՝ ավելի մեծ թվով կազմակերպություններ ներգրավելու ռազմավարությունը նպատակ ունի խթանել թափոնների հավաքագրման և վերամշակման մշակույթի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում: Նախագծի մեկնարկը նշանակալի քայլ է հասարակության շրջանում թափոնների տեսակավորման մշակույթի ձևավորման, հասարակության կրթման և իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Նախագծի իրականացմանն աջակցում է «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ն, որն առանցքային դեր է խաղում տեսակավորման ամանների տեղադրման և տեսակավորված թափոնների հավաքագրման և վերամշակման գործում: Այսօրվա դրությամբ նախաձեռնության շրջանակում տեղադրել է ավելի քան 68 տեսակավորման ամաններ տարբեր վայրերում, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով տեսակավորել թուղթը և պլաստիկը:

Թափոնների տեսակավորմանն ուղղված նախաձեռնություն Երևանի հանրակրթական դպրոցներում

Նախագծի նպատակն էր բարելավել թափոնների կառավարման համակարգը Հայաստանում՝ խրախուսելով թափոնների հավաքագրման և վերամշակման մշակույթի զարգացմանն ուղղված տեղական նախաձեռնությունները: Դպրոցականների մոտ կրթական ծրագրերի միջոցով թափոնների տեսակավորման մշակույթի ձևավորումը կարևոր նշանակություն ունի հասարակության վարքագծի փոփոխության և թափոնների կառավարման համակարգերի արդյունավետ աշխատանքի ապահովման տեսանկյունից՝ հատկապես Երևանում:

Նախագիծն իրականացվում է «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա», «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ ՀԿ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում:

Նախագծի երկամյա գործունեության արդյունքներն են.

Նախագծում ընդգրկվել է ընդհանուր թվով 100 դպրոց:

Նախագծի շրջանակում տեղադրվել է 500 տեսակավորման ամաններ:

Ընդհանուր թվով 5,004 աշակերտ է մասնակցել նախագծի շրջանակում անցկացված բնապահպանական դասընթացներին:

Նախագծի շրջանակում հավաքվել է 4,835 կգ պլաստիկ և 8,331 կգ թղթի թափոն:

Ավելի քան 42,000 աշակերտներ և ուսուցիչներ անուղղակի կերպով օգուտ են ստացել ծրագրից:

70 ուսուցիչներ վերապատրաստվել են շրջակա միջավայրի պահպանությանը և կայուն զարգացմանը վերաբերող՝ դասընթացավարների վերապատրաստման ծրագրի շրջանակում:

Այս արդյունքներն ընդգծում են նախագծի նշանակալի ազդեցությունը Հայաստանում շրջակա միջավայրի կայունության և թափոնների կառավարման վերաբերյալ երիտասարդ սերնդի իրազեկվածության խթանման վրա՝ նպաստելով թափոնների կառավարման և վերամշակման մշակույթի զարգացմանը:

Երևանի հանրակրթական դպրոցներում թափոնների տեսակավորման նախաձեռնության արդյունքները գնահատելու նպատակով կազմակերպվեց ֆոկուս խմբային քննարկում, որին մասնակցեցին վեց մասնակից դպրոցների ութ ներկայացուցիչներ, այդ թվում՝ տնօրեններ և նախագծի համակարգողներ: Մասնակիցները կարևորեցին նախաձեռնության կենսական դերը դպրոցականների շրջանում թափոնների տեսակավորման մշակույթի ձևավորման գործում և հանդես եկան նախագծի ընդլայնման օգտին՝ ապագա նախագծերում ավելի մեծ ներգրավվածության և այլ դպրոցների հետ համագործակցության և գիտելիքների փոխանակման բարելավման միջոցով: Համագործակցությունը թույլ կտա ձևավորել և իրականացնել թափոնների կառավարման համապարփակ պլան հանրակրթական դպրոցների համար:

Շահառուների կարծիքներն ու առաջարկություններն են.

- Դպրոցներում թափոնների տեսակավորման մշակույթի զարգացումը սկսվեց բազային մակարդակից, երբ աշակերտները փաստացիորեն չէին հասկանում գործընթացը, և շարունակվեց «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից կազմակերպված դասընթացների օգնությամբ, որոնց միջոցով նրանք ստացան անհրաժեշտ գիտելիքներ: Չնայած տեսակավորման թափոնամանների սխալ օգտագործման նախկինում տեղի ունեցած դեպքերին, որոնցից են օրինակ՝ լիքը Կոկա-Կոլայի շիշը պլաստիկի համար նախատեսված թափոնաման նետելը, նախաձեռնությունն ի վերջո հանգեցրեց տեսակավորման թափոնամանների ճիշտ և պատշաճ օգտագործմանը:
- Աշակերտների համար անցկացված դասընթացներից հետո պարզ դարձավ, որ կա լրացուցիչ գործնական և ոգեշնչող միջոցառումներ կազմակերպելու բացահայտ անհրաժեշտություն, որոնք կօգնեն նրանց հասկանալ թափոնների տեսակավորման կարևորությունը և կխրախուսեն մասնակցելու այդ գործընթացին: Մասնավորապես, պլաստիկի և թղթի վերամշակումով և համապատասխան ապրանքների արտադրությամբ զբաղվող ընկերություններ այցելությունների կազմակերպումը կարող է մեծապես նպաստել նախաձեռնության առաջխաղացմանը: Դպրոցներում արդեն իսկ կազմակերպվում են թափոններից ամանորյա զարդեր պատրաստելու միջոցառումներ, ինչպես նաև իրականացվում են թափոնների հավաքման աշխատանքներ Երևանյան լճի շրջակայքում: Այնուամենայնիվ, ավելի մեծ թվով ընկերությունների ներգրավումը զգալիորեն կբարձրացնի այդ նախաձեռնությունների արդյունավետությունը:
- Մասնակիցները նախագծի կարևորությունը գնահատել են 100%, մինչդեռ դրա իրականացումը և արդյունավետությունը ներկայումս գնահատվում են 60-70%: Երեխաների և հասարակության ավելի լայն շրջանակների հետևողական ներգրավվածության միջոցով այդ ցուցանիշը կարող է պոտենցիալ բարձրացվել մինչև 100%:
- Օգտակար կլինի ավելացնել դասընթացների և՛ հաճախականությունը, և՛ հասանելիությունը:
- Ցանկալի է ավելացնել դպրոցներում առկա տեսակավորման թափոնամանների քանակը:
- Ուսուցիչների համար դասընթացների անցկացումը նույնպես օգտակար կլինի:
- Ավելի կրեատիվ կերպով ձևավորված տեսակավորման թափոնամանների տեղադրումը կարող է խրախուսել աշակերտներին ավելի հաճախ օգտագործել դրանք:

Համայնքների բարեկեցություն

2022թ. և 2023թ. ընթացքում իրականացվել է տոնական տրամադրություն հաղորդող «Կոկա-Կոլա Ամանորյա Քարավան» նախաձեռնությունը՝ «Աշխարհին շատ սանտաներ են պետք» խորագրով: Նախաձեռնության շրջանակում առաջին այցը կատարվել է Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոն, որտեղ երեխաները դիտեցին հատուկ ամանորյա ներկայացում և մասնակցեցին ինտերակտիվ խաղերի Ձմեռ պապի և Ձյունանուշի հետ և ստացան նվերներ «Կոկա-Կոլա Ամանորյա Քարավան»-ից:

2022-2023թթ. տոնական Կոկա-Կոլա Ամանորյա Քարավանին մասնակից էին թվով 3,300 երեխաներ Հայաստանի տարբեր բարեգործական կազմակերպություններից, այդ թվում՝ Գյումրու «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն»-ից (ՍՕԱՐ),

«Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ի Գյումրիի և Վանաձորի մասնաճյուղերից, «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղից, «Երիտասարդությունը հանուն փոփոխության» ՀԿ-ի Գեղարքունիքի կենտրոնից, «Օրրան» բարեգործական ՀԿ-ից, «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամից, «Հայաստանի մանուկներ» (ՔՈԱՖ) բարեգործական հիմնադրամից, «Հայկական Կարիտաս», «Նոր Սերունդ» և «ԱՅՈ» բարեգործական ՀԿ-ներից:

Երիտասարդների զարգացում

«Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա»-ն ձգտում է նպաստել երիտասարդների, հատկապես մարզերում բնակվողների կրթության հնարավորությունների ընդլայնմանը: Ընկերության դերը կրթության զարգացման հարցում բավականին մեծ է, և տարբեր նորարական կրթական նախաձեռնություններին աջակցելով, այն հնարավորություն է ընձեռում երիտասարդներին բացահայտելու, զարգացնելու և իրացնելու իրենց ներուժը: Դասընթացներն անվճար են և հասանելի են Ընկերության youthtraining.am կայքում:

Պարբերաբար կազմակերպվել են առաջնորդության դասընթաներ և վեբինարներ ինչպես Ընկերության ղեկավար կազմի անդամների, այնպես էլ բիզնես ոլորտի ներկայացուցիչների կողմից:

2022 -2023 թթ.-ին Կյանքի և բիզնես հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացներին մասնակցել է 13,776 մասնակից:

Երիտասարդների զարգացման համար հնարավորությունների ընդլայնման ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար Երևանում անցկացվեց ֆոկուս խմբային քննարկում ընդհանուր թվով 10 մասնակիցների հետ:

Քննարկման արդյունքում ստացված կարծիքները ցույց տվեցին, որ նախագիծը հաջողված է, և մասնակիցների մեծ մասը նշեց, որ գոհ է ձեռք բերված հմտություններից և գիտելիքներից:

Նախագծին մասնակցելու հիմնական պատճառներն են.

Նոր ոչ մասնագիտական հմտությունների և գիտելիքների ձեռքբերումը

Տաղանդավոր և խելացի երիտասարդների հետ փոխգործակցությունը և ընկերական հարաբերությունների հաստատումը

Դասընթացի վստահություն ներշնչող ձևաչափը

Ծահառուների դիտարկումներն ու առաջարկություններ են.

- Դասընթացավարների տեսակետները շատ մոտիվացնող էին:
- Թեստերը մանրակրկիտ մտածված էին:
- Օգտակար կլինի ունենալ դասընթացների համապարփակ նյութերը, որոնք թույլ կտան վերանայել և վերհիշել դասընթացների ընթացքում ուսումնասիրված թեմաները:
- Դասընթացների արդյունավետությունը կբարձրացվի, եթե դրանք անցկացվեն փոքր, թեմատիկ խմբերում՝ համապատասխանելով յուրաքանչյուր լսարանի պահանջներին:
- Դասընթացները կարող են անցկացվել ավելի գրավիչ և ինտերակտիվ ձևով:
- Կարևոր է ապահովել դասընթացների շարունակական բնույթը:
- Հաշվի առնելով դասընթացների ինտենսիվ բնույթը՝ երկօրյա և եռօրյա դասընթացների անցկացումը կբարձրացնի արդյունավետությունը:
- Մարզերում նմանատիպ դասընթացների անցկացումը չափազանց կարևոր է, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում տեղի երիտասարդներին ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և ոչ մասնագիտական հմտություններ:

05

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ



Ազդեցությունը ՀԱԱ-ի մասով[1,3,5]

Ընկերության գնահատմամբ 2022-2023թթ. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ստեղծել է 49.1 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով ՀԱԱ Հայաստանի տնտեսությունում՝ ներառյալ անուղղակի և ածանցյալ ազդեցությունները:

0.30% Այս ցուցանիշը կազմել է նշված ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծված ընդհանուր ՀԱԱ-ի 0.30 %-ը[2,3]:

ՀԱԱ մասով ընդամենը ազդեցության կառուցվածքը 2022-2023թթ.



22.68 միլիարդ ՀՀ դրամ.

Ընկերության սեփական գործունեության արդյունքում ստեղծված ուղղակի ՀԱԱ

21.70 միլիարդ ՀՀ դրամ.

Հայաստանում գործող 1-ին կարգի (ուղղակի) մատակարարների գծով Ընկերության ծախսումների և մատակարարման ավելի լայն շղթայում ձևավորված գործունեության արդյունքում Ընկերության կողմից ստեղծված անուղղակի ՀԱԱ

4.73 միլիարդ ՀՀ դրամ.

Ընկերության ուղղակի և անուղղակի աշխատակիցների կողմից Կոկա-Կոլա ՀԲՔԱ-ի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու արդյունքում Ընկերության կողմից ստեղծված ածանցյալ ՀԱԱ

ՀԱԱ-ի կառուցվածքը և աճը 2022թ-ին և 2023թ-ին, միլիարդ ՀՀ դրամով



[5] Անուղղակի և ածանցյալ ազդեցությունները գնահատելիս կիրառվում է ծախսեր-արդյունք մոդելավորման մոտեցումը: Մեր վերլուծությունը հիմնված է «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մատակարարման շղթայի կառուցվածքի վրա, և վերլուծության համար օգտագործվել է Հայաստանին հատուկ ծախսեր-արդյունք աղյուսակը և դրանից ստացված I և II կարգի մուլտիպլիկատորները: Հաշվարկների համար օգտագործված մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է 2022թ. օգոստոսին և 2018թ. դեկտեմբերին հրապարակված Սոցիալական, տնտեսական և բնապահպանական ազդեցության գնահատման հաշվետվություններում:
https://am.coca-colahellenic.com/hy/a-more-sustainable-future

+1.2 ՀՀ դրամ

2022-2023թթ. ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված ուղղակի ՀԱԱ-ի յուրաքանչյուր 1 ՀՀ դրամ դիմաց Հայաստանի տնտեսությունում ստեղծվել է լրացուցիչ 1.2 ՀՀ դրամ անուղղակի և ածանցյալ ՀԱԱ:

72%

28%

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն հասույթը ստանում է Հայաստանում արտադրված և ներմուծված ապրանքների վաճառքից: 2022-2023թթ. ընթացքում Հայաստանում արտադրված ապրանքների վաճառքից ստացված հասույթի մասնաբաժինն ընդհանուր հասույթում կազմել է մոտ 72%[1], իսկ ներմուծված ապրանքներից ստացված հասույթը՝ 28%[1]:

2023թ-ին արտադրված ապրանքների վաճառքից ստացված եկամտի մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ աճել է 8 տոկոսային կետով՝ կազմելով 76%[1]:

Հասույթի կառուցվածքը 2022թ-ին և 2023թ-ին [1,3]



Ընկերության անուղղակի ազդեցությունը երկրի տնտեսության վրա ՀԱԱ-ի մասով ստեղծում են տեղական մատակարարները, որոնցից «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն անմիջականորեն գնում է ապրանքներ և ծառայություններ, և տեղական դիստրիբյուտորները և մանրածախ առևտրով զբաղվող կազմակերպությունները, որոնք վաճառում են Ընկերության արտադրանքը: 2022-2023թթ. ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի գնումների 41%[1] կազմակերպվել է Հայաստանի տնտեսության ներսում:

2022թ-ին տեղական գնումների մասնաբաժինը կազմել է 39%[1], իսկ 2023թ-ին՝ 43%[1]:

Տեղական մատակարարների և առևտրային գործընկերների հետ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի անմիջական համագործակցության արդյունքում ստեղծվել է 17.8 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով 1-ին կարգի մատակարարների շղթայի անուղղակի ՀԱԱ: Մատակարարման ավելի լայն շղթայի միջոցով ստեղծվել է 3.9 միլիարդ ՀՀ դրամ անուղղակի ՀԱԱ:

Մենք իրականացրել ենք «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ՀԱԱ-ի մասով ուղղակի, անուղղակի և ածանցյալ ազդեցության վերլուծություն ըստ տնտեսության ճյուղերի, որի մանրամասները ներկայացված են ստորև: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության համաձայն՝ 2022թ-ին և 2023թ-ին ՀԱԱ-ի աճի հիմնական խթաններն են եղել տնտեսության հետևյալ ճյուղերը.

Մանդամթերք և ըմպելիքներ
Հիմնականում արտադրական նպատակներով տեղական արտադրանքի ձեռքբերման շնորհիվ

Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
Հիմնականում շուկայավարման և կառավարչության հետ կապված ծառայություններից օգտվելու շնորհիվ

Մեծածախ առևտուր
Ընկերության արտադրանքի իրացման արդյունքում առաջացած ազդեցության շնորհիվ

Փոխադրման ծառայություններ
Արտադրանքի առաքման շնորհիվ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ՀԱԱ-ի մասով անուղղակի ազդեցությունը Հայաստանում ըստ տնտեսության ճյուղերի, 2022-2023թթ., միլիոն ՀՀ դրամով[1,3]



«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ՀԱԱ-ի մասով ածանցյալ ազդեցությունը Հայաստանում ըստ տնտեսության ճյուղերի, 2022-2023թթ., միլիոն ՀՀ դրամով[1,3]

2,085	Մեծածախ առևտուր
573	Մենդամթերք և ըմպելիքներ
422	Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք
378	Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
350	Փոխադրման ծառայություններ
130	Մանրածախ առևտուր
545	Այլ
700	«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»

Աշխատատեղերի ապահովում[1,3,5]

Ստեղծված աշխատատեղեր[1,3]

Ըստ գնահատումների՝

1,925 2022թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ստեղծել է 1,925 աշխատատեղ, որը կազմում է Հայաստանի աշխատակիցների ընդհանուր թվաքանակի 0.17%-ը:

2,150 2023թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ստեղծել է 2,150 աշխատատեղ, որը կազմում է Հայաստանի աշխատակիցների ընդհանուր թվաքանակի 0.18%-ը:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված աշխատատեղերի բացվածքը[1,3]

1,925 աշխատատեղից՝

Աշխատատեղերի ապահովում (ուղղակի, անուղղակի, ածանցյալ), 2022թ.



2,150 աշխատատեղից՝

Աշխատատեղերի ապահովում (ուղղակի, անուղղակի, ածանցյալ), 2023թ.



+4.9

2022թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված յուրաքանչյուր ուղղակի աշխատատեղի շնորհիվ Հայաստանում ստեղծվել է լրացուցիչ 4.9[1,3] աշխատատեղ (անուղղակի և ածանցյալ):

+5.2

2023թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված յուրաքանչյուր ուղղակի աշխատատեղի շնորհիվ Հայաստանում ստեղծվել է լրացուցիչ 5.2[1,3] աշխատատեղ (անուղղակի և ածանցյալ):

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի

Ստորև ներկայացված է «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված աշխատատեղերի վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության համաձայն՝ 2022թ. ընթացքում ստեղծված աշխատատեղերի թվաքանակի աճի հիմնական խթանները եղել են տնտեսության հետևյալ ճյուղերը.

Մեծածախ առեվտուր
Ընկերության արտադրանքի իրացման արդյունքում առաջացած ազդեցության շնորհիվ

Մննդամթերք եվ ըմպելիքներ
Հիմնականում արտադրական նպատակներով տեղական արտադրանքի ձեռքբերման շնորհիվ

Փոխադրման ծառայություններ
Առաքումների շնորհիվ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված անուղղակի աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի 2022թ-ին



Մեծածախ առևտուր | Մննդամթերք և ըմպելիքներ | Փոխադրման ծառայություններ | Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք | Այլ

- Անուղղակի աշխատատեղեր՝ 1-ին կարգի մատակարարներ
- Անուղղակի աշխատատեղեր՝ մատակարարման ավելի լայն շղթա

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված անուղղակի աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի 2023թ-ին



Մեծածախ առևտուր | Մննդամթերք և ըմպելիքներ | Փոխադրման ծառայություններ | Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք | Այլ

- Անուղղակի աշխատատեղեր՝ 1-ին կարգի մատակարարներ
- Անուղղակի աշխատատեղեր՝ մատակարարման ավելի լայն շղթա

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված ածանցյալ աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի 2022թ-ին

- **134** — Մեծածախ առևտուր
- **36** — Մննդամթերք և ըմպելիքներ
- **26** — Փոխադրման ծառայություններ
- **24** — Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
- **22** — Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք
- **37** — Այլ
- **41** — «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված ածանցյալ աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի 2023թ-ին

- **149** — Մեծածախ առևտուր
- **38** — Մննդամթերք և ըմպելիքներ
- **33** — Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք
- **25** — Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
- **19** — Փոխադրման ծառայություններ
- **50** — Այլ
- **48** — «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»

Ֆիսկալ ազդեցություն[1,3,5]

Վճարումներ պետական բյուջե

Լինելով Հայաստանի խոշոր արտադրող, ներմուծող և գործատու՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն Հայաստանի պետական բյուջե նշանակալից չափով մուտքեր կատարող ընկերություններից մեկն է: Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության կողմից հրապարակված Հայաստանի 1000 խոշոր հարկ վճարողների ցանկի համաձայն՝ 2022թ-ին և 2023թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն դասվել է Հայաստանի առաջին 30 խոշոր հարկ վճարողների շարքին:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից պետական բյուջե կատարվող մուտքերը ներառում են Ընկերության կողմից վճարվող հարկերը, այդ թվում՝ շահութահարկը, աշխատակիցների անունից վճարվող եկամտային հարկը, կառավարության համար գանձվող հարկերը, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

23.8 միլիարդ ՀՀ դրամ

Ըստ գնահատումների՝ 2022-2023թթ. Ընթացքում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ընդամենը պետական բյուջե վճարել է 23.8 միլիարդ ՀՀ դրամ, որը կազմել է նույն ժամանակաշրջանի ՀՀ հարկային եկամուտների 0.57%-ը:

Պետական բյուջե կատարած ընդամենը վճարումների կառուցվածքը[1,3]

15.35 միլիարդ ՀՀ դրամ
Ուղղակի ֆիսկալ ազդեցություն[6]

4.35 միլիարդ ՀՀ դրամ
Ֆիսկալ ազդեցություն մատակարարման շղթայի և ածանցյալ նտեսական գործունեության շնորհիվ

4.13 միլիարդ ՀՀ դրամ
Ուղղակի, անուղղակի և ածանցյալ ֆիսկալ ազդեցություն աշխատակիցների մասով

Ֆիսկալ ազդեցության կառուցվածքը և աճը 2022թ-ին և 2023թ-ին, միլիարդ ՀՀ դրամով[1,3]



- Ուղղակի ֆիսկալ ազդեցությունն6
- Ֆիսկալ ազդեցություն մատակարարման շղթայի և ածանցյալ տնտեսական գործունեության շնորհիվ
- Ուղղակի, անուղղակի և ածանցյալ ֆիսկալ ազդեցություն աշխատակիցների մասով

Ներդրումներ[1,3,5]

Այս բաժնում ներկայացված են «Կոկա- Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի 2022թ-ի և 2023թ-ի կապիտալ ծախսումները: Կապիտալ ծախսումներն իրենցից ներկայացնում են ենթակառուցվածքների ձեռքբերման կամ արդիականացման համար կատարվող ծախսումները: Ներդրումային գործունեությունը տնտեսական ազդեցության չափման կարևոր գործոններից է, քանի որ համարվում է տնտեսական աճի հիմնական խթաններից մեկը:

Ներդրումներ 2022-2023թթ.[1]

2022թ.	2023թ.
827 միլիոն ՀՀ դրամ	**1,086 միլիոն ՀՀ դրամ**

2022թ.

8.4%	«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կապիտալ ծախսումների ինտենսիվություն
25.0%	ՀՀ մասշտաբով տնտեսությունում իրականացված կապիտալ ծախսումների ինտենսիվություն

2023թ.

8.5%	«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կապիտալ ծախսումների ինտենսիվություն
23.9%	ՀՀ մասշտաբով տնտեսությունում իրականացված կապիտալ ծախսումների ինտենսիվություն

[6] Ուղղակի ֆիսկալ ազդեցությունը չի ներառում եկամտային հարկը և սոցիալական ապահովության վճարները՝ կրկնակի հաշվարկից խուսափելու նպատակով, քանի որ դրանք հաշվառվում են աշխատակիցների ֆիսկալ ազդեցությունում:

06

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցման արդյունքները

Շահառուների ներգրավվածությունը բարելավելու և նրանց ակնկալիքներին համապատասխանելու նպատակով՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն անց է կացրել 14 հարցից բաղկացած հարցում: Հարցման նպատակն էր ստանալ շահառուների կարծիքը նրանց հետ փոխգործակցության բարելավման հնարավորությունները բացահայտելու համար: Հարցման արդյունքները թույլ կտան մշակել փոխգործակցության ապագա մարտավարությունը՝ ապահովելով Ընկերության կողմից շահառուների պահանջների կատարումը և ակնկալիքների կանխատեսումը:

Հարցման նպատակն էր նաև ստանալ շահառուների կարծիքն Ընկերության գործունեության սոցիալական, բնապահպանական և տնտեսական ազդեցության վերաբերյալ: 14 հարցերից յուրաքանչյուրի համար մասնակիցներին առաջարկվում էր նաև նշել թեմայի կարևորությունը նրանց տեսանկյունից: Հարցմանը մասնակցել է տասնվեց հոգուց բաղկացած շահառուների խումբ, որոնք ներկայացնում են շահառուների ութ դասերը:

Ստորև ներկայացված մատրիցն արտացոլում է մասնակիցների տեսանկյունը դիտարկվող 14 ոլորտների վերաբերյալ:

Հարցման արդյունքների համաձայն և ինչպես ներկայացված է գրաֆիկում, գնահատականների մեծ մասը գտնվում է վերին աջ հատվածում՝ արտացոլելով Ընկերության նշանակալի ազդեցությունը:



«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ազդեցությունը

- Կորպորատիվ կառավարում, բիզնես էթիկա և կաշառակերության դեմ պայքար
- Կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում տնտեսական ոլորտում/գենդերային հավասարություն
- Ուղղակի և անուղղակի տնտեսական ազդեցություն
- Մարդու իրավունքներ, բազմազանություն և հավասար հնարավորություններ
- Առողջություն և անվտանգություն, արտադրանքների որակ
- Արտադրանքների որակ
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, ներդրումներ և տեղական համայնքների ներգրավվածություն
- Փաթեթավորում, վերամշակում և թափոնների կառավարում
- Աշխատակիցների բարեկեցության բարելավում, զարգացման և ներգրավվածության ապահովում
- Աշխատանքի անվտանգություն և աշխատակիցների առողջության պահպանում
- Ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում
- Կլիմայի փոփոխություն, արտանետումներ, էներգիայի օգտագործում և էներգաարդյունավետություն
- Կայուն մատակարարում և մատակարարման շղթայի կառավարում
- Պատասխանատու շուկայավարում

Հարցմանը մասնակցած շահառուներն ըստ ոլորտների



ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Այս հաշվետվությունը պատրաստվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի մասնակցությամբ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն չի տրամադրում որևէ հավաստիացում օգտագործված տեղեկատվության աղբյուրների համապատասխանության կամ ճշգրտության վերաբերյալ և հանձն չի առնում որևէ պատասխանատվություն այս հաշվետվության համար որպես հիմք օգտագործված տվյալների համար: Թեև մենք ձգտել ենք տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն սահմանված ժամկետներում, մենք չենք կարող երաշխավորել, որ այդ տեղեկատվությունը ճշգրիտ է այն ստանալու ամսաթվի դրությամբ, կամ որ այն կշարունակի ճշգրիտ լինել ապագայում: Այդ տեղեկատվության հիման վրա ոչ ոք չպետք է ձեռնարկի որևէ գործողություն առանց համապատասխան մասնագիտական խորհրդատվության՝ կոնկրետ իրավիճակի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ից տարբեր ցանկացած կողմ, որին տրամադրվում է այս հաշվետվությունը կամ վերջինիս պատճենը և որը որոշում է հիմնվել այս հաշվետվության (կամ դրա որևէ մասի) վրա, գործում է իր սեփական ռիսկով: Օրենքով թույլատրվող առավելագույն չափով «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն չի կրում կամ հանձն չի առնում որևէ պատասխանատվություն այս հաշվետվության՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ից տարբեր որևէ օգտագործողի նկատմամբ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի համար իրականացված իր աշխատանքի, այս հաշվետվության կամ ցանկացած դատողությունների, եզրահանգումների, կարծիքների, արդյունքների կամ առաջարկությունների համար, որոնք կարող էին ձևավորվել կամ կատարվել «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի կողմից: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն հանձն չի առնում որևէ պատասխանատվություն և չի կրում որևէ պարտավորություն այս հաշվետվության հետ կապված «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ից տարբեր որևէ կողմի նկատմամբ:

Այս փաստաթղթում ներկայացված են «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի տեսանկյունները և եզրահանգումները, և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի տեսանկյունների և եզրահանգումների հետ:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0052, Թբիլիսյան խճուղի 8/3

Հեռ. +374 10 200 100
Կայք. https://am.coca-colahellenic.com
http://happyvisit.am

Հաճախորդների և սպառողների զանգերի կենտրոն
Հեռ. +374 10 200 100